ՊԱՐՈՆԵԱՆ.—«Մեծապատիւ մուրացկաններ» Հրատ. Հայոց Հրատարակչական ընկերութեան: Թիֆլիս, 1891 թ., տպարան Շարաձէի. 8-ածալ, 163 երես, տառ № 12, գինն է 40 կոպէկ:

---

Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկանները» սատիրա է Կ. Պոլսի այն շրջանների բարքերի, որոնք ներկայացուցիչ են հասարակական, կամ, ինչպէս այնտեղ ընդունուած է ասել, ազգային շահերի և միջնորդ են եւրոպական սկզբունքները տեղական կեանքի մէջ մտցնելու համար: Սատիրան ցոյց է տալիս, որ այդ ներկայացուցիչները շատ հեռու են այդ տեսակ բարձր կոչումից և միենոյն ժամանակ գտնւում են այնպիսի ողբալի վիճակի մէջ, այնպիսի ծանր կարօտութեան մէջ, որ միայն մուրացկանին վայել միջոցներով կարողանում են պահպանել իրանց գոյութիւնը այդ ասպարիզում, մի կողմ դնելով և անձնական պատիւը և բարոյականութեան տարրական պահանջները:

Սատիրայի ֆաբուլան կազմում է մի շատ սովորական դէպք. Կ. Պոլիս է գալիս մի տրապիզոնցի հարուստ, բայց բոլորովին անկիրթ վաճառական, որի գլխաւոր նպատակն է այդ քաղաքում ձեռնտու կերպով ամուսնանալ: Կարծես դիւթական ազդեցութեամբ այս մարդու գալը իսկոյն իմանում են Կ. Պոլսի խմբագիրները, բանաստեղծները, դաստիարակները՝ հեղինակները, բժիշկները, փաստաբանները, քահանաները և այլն, որոնք, ինչպէս թռչունները դակի վերայ, հաւաքւում են այս մարդու շուրջը, մի որ և իցէ նիւթական օժանդակութիւն կորզելու համար: Այդ նպատակով շռայլում են այս դռեհիկ մարդուն գիտնականի, լեզուագէտի, հայրենասէրի և այլ սրանց նման պատուաբեր տիտղոսներ:

Ընդունելով այն ամենապարզ ճշմարտութիւնը, որ ոչ մի բան ինքնիրան չի ծագում, այլ ունի իւր պատճառները, մեզ դժուար չի լինիլ ըմբռնել, որ այս սատիրայում հանգուցեալ Պարոնեանը հարւածում է Կ. Պոլսի հասարակութիւնը ամբողջովին, որը գտնւում է բարոյապէս և մտաւորապէս այնչափ ստոր աստիճանի վերայ, որ անընդունակ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց մէջ հնար լինի մտաւոր և հասարակական իսկական գործիչների գոյութիւնը. ուրիշ խօսքերով այդ հասարակութիւնը զուրկ է քաղաքակիրթ հասարակութիւններին յատուկ պահանջներից և ղեկավարւում է դեռ գլխաւորապէս ստոր ձգտումներով:

Սատիրան կարդացւում է հետաքրքրութեամբ, հիւմորը երբեմն շօրեղ տպաւորութիւն է գործում, բայց զուրկ չէ պակասութիւններից, որոնք բաղկանում են չափազանցութիւնների մէջ (утрировка).

Ց. Ս.

---